

«ՔՈՂ ՏՈՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԲՆՈՒ ԳԱՆ» ԳՈՒԿ ՉԸ 16:

ՀԱՏՈՐ ԺԸ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՐՏ 1, 1889

ԹԻԻ 3

ՃԻՆԵՎՐԱ


Ճինեվրա հին քաղաքը շինուած է այն տեղը ուր Ռոմ գետը կը բղխի Ճինեվրայի լճէն: Քաղաքը շինուած է Ռոմի երկու կողմն ալ. գետոյն վրայ ձգուած են վեց կամուրջներ որոց միայն մին կ'երևի պատկերին մէջ: Երևելի շատ մարդիկ ծնած են Ճինեվրայի մէջ կամ եկած բնակած են հոն տեղոյն բնիկներուն հետ: Բնիկներուն ամենէն համբաւաւորն էր Ժան Ժազ Ռուսոյ: Ասոր գրական գործերը հրատարակաւ այրուեցան քաղաքին կառավարչին պալատան առջև 1762ին, բայց հիմա անոր յիշատակի արձան մը կանգնուած է Ռոմ գետոյն մէջ փոքր կղզւոյ մը վրայ, և դուք կրնաք տեսնել արձանը պատկերին մէջ:

Պատկերին մէջտեղը և գետոյն ետեւի կողմը կը գտնուի Ճինեվրայի մայր եկեղեցին: Հռոմայեցոյ իշխանութեան օրերը, որոց հպատակեցաւ քաղաքը նախ քան զՔրիստոս 120ին, նոյն տեղը կառուցուած էր Ապոլոն շատուածին մէկ տաճարը: Գետոյն մի և նոյն կողմն է Համալսարանը, ուր կը կրթուին բազմաթիւ ուսանողք, որոց մէկ մեծ մասը օտար երկիրներէ են: Քաղաքէն դուրս անոր շատ մօտ կը գտնուի հուշակաւոր յիմարանոց մը որ շատ փառաւոր չէնք է:

Ճինեվրա ամենէն աւելի ծանօթ է իւր մէջ շինուած Ժամացոյցներուն համար, և մենք չունինք տարակոյս թէ Ճինեվրայի Ժամացոյցներ կը գտնուին այն տուններէն շատերուն մէջ ուր կ'եր-

թայ Տղայոց Աւետարերը: Ժամացոյցներուն, գոհարեղէններուն և երաժշտական գործիքներուն պատրաստութեան գործին մէջ կ'աշխատին հարիւրաւոր անձինք: Ճինեվրայի բնակչաց գրեթէ կէսը Բողոքական է և կէսը կաթոլիկ: Քաղաքին մէջ ըստ մեծի մասին Գաղիերէն լեզուն կը խօսուի, թէպէտ

որ բոցեր դուրս կ'ելլէին իւր պատահանէն: Իմացաւ թէ իւր փոքրիկ աղջիկը տակաւին ներսը կը մնար. և երբ անէն ներս մտնելու վրայ էր, արդէ լեցին զնա ըսելով թէ անշուշտ պիտի մեռնէր հոն այրելով բոցերուն մէջ: Բայց մայրը ներս վազեց և գտաւ որ աղան կը մնար այն տեղ ուր դրած



ՃԻՆԵՎՐԱ

Չուիցերիոյ մէջ շատ տեղեր Գերմաներէնն է ընդհանուր լեզուն: Ճինեվրայի վրայ ուրիշ բաներ ալ միտք ունինք խօսիլ այսուհետեւ՝ երբ անոր վերաբերեալ ուրիշ պատկերներ ալ դնենք:

ՀՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԵՂՐԱՆ

Ժամանակաւ կար աղջիկ մը որ չէր ուզեր խոստովանիլ իւր մօր համար թէ իւր մայրն էր նա: Երբ այս աղջիկը շատ փոքր էր, անգամ մը մայրը ըստիպուեցաւ պէտքի մը համար տղաքը տունը թողուլ և երթալ դրացւոյն տունը: Երբ տուն դարձաւ, տեսաւ

էր ինք: Խնամով փաթթեց զնա ծածկոցի մը մէջ և ապահով դուրս հանեց, սակայն մայրն ինք խանձուեցաւ սոսկալի կերպով: Ամիսներով կը տառանէր կենաց և մահուան մէջտեղ, և երբ առողջացաւ, շատ ահաւելի կերպարանք մը ունէր: Քսան տարի ետքը երբ այն փոքրիկ աղջիկը մանկամարդկին մը եղած էր, օտարական մը հարցուց անոր թէ ո՞վ էր այն այլանդակ կերպարանքով կինը: Աղջիկը ամչցաւ խոստովանելու թէ իւր մայրն էր նա: Որչափ հազարաւորներ կան որ այսպէս կ'ընեն Յիսուս Քրիստոսի մասին: Ինչպէս այն մանկամարդկինը դժկա-

մակ էր ըսել թէ «Այս է իմ մայրս» նոյնպէս անոնք ալ դժկամակ են խոստովանել զնա որ մեռաւ իրենց համար և որոյ կերպարանքը աւելի աւրուեցաւ քան որչափ որ և իցէ մարդու, և չեն ուզեր ըսել, «Այս է իմ փրկիչս և իմ թագաւորս, և ես պիտի ծառայեմ անոր և պիտի սիրեմ զնա յաւիտեան»։ Զպոյշ ըլլանք որ մենք ալ չընենք այս աստիճան վատութիւն։

ՆԱԳԼՈՒՍ

Նապլուս անուով փոքր քաղաքը Երուսաղեմէ 34 մղոն հեռու է դէպ ի հիւսիս, և կը գտնուի հին քաղաքի մը տեղոյն վրայ որ Սուրբ Գիորգին մէջ երբեմն կը կոչուի Սիւքեմ, և երբեմն՝ Սուքար։ Այս քաղաքն էր այն որուն մօտ Յակոբայ աղբիւրին քով նստաւ Յիսուս և Սամարացի կնոջ սորվեցուց այն պատուական ճշմարտութիւնները։ Պատկերը որ կը տեսնէք, առնուած է Գերաղ լեռնէն որուն վարի մասը կը տեսնուի, և Նապլուսի ետևի կողմը կ'երևի բոլորակ գագաթը Գարիգին լեռան որուն համար Սամարացի կինն ըսաւ Յիսուսի, «Մեր հայրերը առ լեռանս վրայ երկրպագութիւն ըրին»։ Հեռին կը տեսնուին Միջերկրական ծովուն շուրթերը։

Նապլուսի բնակչաց մէջ կը գտնուի Սամարացի փոքրիկ հասարակութիւն մը, հազար 200 հոգիէ բաղկացեալ։ Ասոնք ունին փոքրիկ ժողովարան մը Գարիգին լեռան ստոր, ուր կը կատարեն իրենց կրօնական պաշտամունքը։ Տին Սթէյնլի, Անգղիացի մատենագիրը, կ'ըսէ անոնց վրայ. «Թերևս ուրիշ և ոչ տեղ մը նոյն պաշտամունքը պահուած է քիչ փոփոխութեամբ կամ ընդհատմամբ այսչափ երկար տարիներ՝ քան որչափ այս լեռան մէջ» և կը կոչէ Սամարացիները «աշխարհիս ամենէն հին և ամենէն փոքր կրօնական հասարակութիւնը»։ Բայ ի Նապլուսի մէջ գտնուողներէն՝ քանի մը Սամարացիներ կը գտնուին նաև Եգիպտոսի Գահիրէ քաղաքին մէջ։


Նապլուսի Սամարացոց ամենէն հետաքրքրական ստացուածն է հին ձեռագիր մը Մովսիսի հինգ գիրքերուն։ Անոնք միայն այս գիրքերը կ'ընդունին իբրև Աստուածաշունչ։ Զեռագրին պահարանը արծաթէ է և ոսկեզօծեալ, և անոր վրայ քանդակուած են խորանին և սրբազան անօթներուն պատկերները ննչպէս կը տեսնէք։ Զեռագիրն է ոչխարի մորթէ շինուած պատառատուն մագաղաթի մը վրայ, իբր տանուհիներ ոտք երկայն և քանուհիներ մատ լայն։ Սամարացիք կ'ըսեն թէ Յեսուսայ օրերը գրուած է այն։ Այս խօսքն հարկաւ չէ ստայգ, բայց զայն քննող ուսումնականք կ'ըսեն թէ թերևս ըլլայ հազար տարուան։ Սամարացոց ազգին այս փոքրիկ մասը որ կը կարգայ իւր Հնգամասնեան մէջ իւր մեծարոյ Մովսիսին խօս-

քը թէ «Գու Տէր Աստուածդ քու եղբայրներուդ մէջէն ինծի պէս մարդակէ մը պիտի հանէ», արդեօք երբեք պիտի հասկընայ թէ այն մարդարէն եկած է արդէն»։

պատմածը։ Մինչ իւր մայրը թի կը քաշէր, բան մը տեսաւ շրին մէջ և ծռեցաւ որ նայի անոր վրայ։ Յետոյ տղան տեսաւ որ կոկորդիլոս մը բռնեց իւր մայրը և կը քաշէր զնա նաւակէն դուրս։ Այնուհետև կոկորդիլոսը և



ՆԱԳԼՈՒՍ



ՍԱՄԱՐԱՅԻՆ ՁԵՐԱԳՐԻՆ ՊԱՀԱՐԱՆԸ
ՔՈՆԿՈՑԻ ՔԱՋ ՏՂԱՅ ՄՈ

Որդիական անձնանուիրութեան աւելի սրտաշարժ պատմութիւն մը բնաւ լուծած չէ քան որչափ այն զոր ըրաւ Բոնկոցի ցեղապետը, Էսայաքա, փոքրիկն իմ հաղարապետին։

Դուք գիտէք որ, ըսաւ, իմ քաղաքիս մօտ կայ մեծ կղզի մը։ Երէկ արևուն ծագելէն քիչ ետքը իմ կիններէս մին և մեր փոքրիկ մանչը նաւակ մը մաներով ճամբայ ելան երթալ այդ կղզին։ Տղան իբր տասներկու տարեկան է։ Ահա հետևեալն է տղին

կինը շուրին մէջ անյայտ եղան։ Թիակը կը կենար նաւակին մէջ։ Տղան ձեռք առաւ զայն որպէս զի թիակարէր դէպ ի գիւղը։ «Ո՛հ, երանի թէ կարող ըլլայի վախճուեալ կոկորդիլոսը և ետ բերել մայրս» կը խորհէր ինքն իրեն։ Զուրին չարժուածէն կրնար հասկնալ թէ ո՛ւր կը գտնուէր կոկորդիլոսը։ Կը լողար նա ճիշդ շրին երեսին մօտէն դէպ ի կղզին։ Այնուհետև տղան հետևեցաւ կոկորդիլոսին՝ կողածին չափ արագ թի քաշելով։ Շատ շուտով կոկորդիլոսը հասաւ կղզին և ելաւ ցամաք։ Կնոջ մարմինը դրաւ գետին։ Յետոյ զնաց ետ գետը, և մտաւ շուրը։ Գիտէ՞ք թէ ինչո՞ւ այսպէս ըրաւ։ Իւր ընկերը կ'ուզէր և կ'երթար զըտնել զայն։

Այնուհետև փոքր տղան արագ աւրագ թի քաշել սկսաւ դէպ ի այն կողմը ուր իւր մայրը պառկած էր։ Գուրս ցատկեց նաւակէն և վազեց դէպ ի նա։ Մեծ վէրք մը կար մօրը կողմէին վրայ։ Այնուհետև զոյգ էին։ Տղան տարակայս չունէր թէ մեռած էր իւր մայրը։ Զօրաւոր էր, բայց ոյժը չէր բաւեր վերցունել զնա։ Մարմինը քաշեց նաւակին մէջ։ Գիտէ՞ք թէ կոկորդիլոսը կրնար ետ դառնալ որ և իցէ վայրկեան և զինքն ալ սպաննել։ Բոլոր ուժով կը քաշէր զայն։ Գիշ քիչ իւր մօրը մարմինը բերաւ նաւակին մէջ դրաւ։ Յետոյ ճամբայ ելաւ երթալ տուն։

Նոյն միջոցին մենք բնաւ չէինք տեսած ո՛չ տղան և ո՛չ անոր մայրը։ Յանկարծ լսեցինք աղաղակի մը ձայն գետոյն վրայ, և տեսանք տղան որ կը ցածին չափ ուժով թի կը քաշէր։ Ամէն անգամ որ երկու, երեք հեղ կը քաշէր՝ կը նայէր ետևը։ Այն ատեն տեսնեք որ կոկորդիլոսը արագ արագ

լողալով կու գար դէպ ի նաւակը : Եթէ հասնէր անոր՝ գիտէք թէ ինչ պիտի ընէր : Պիտի տապալէր նաւակը մէկ հարուածով, և պիտի կորսուէին թէ՛ տղան և թէ՛ մայրը : Մենէ ութ ինը հոգի հետ առնելով ցատկեցինք նաւակներու մէջ, և քշեցինք զանոնք երթալ դէպ ի տղան : Կոկորդիլոսը գրեթէ հասնելու վրայ էր նաւակին, բայց մենք ճիշդ ժամանակին հասանք անոր : Կոկորդիլոսը վախցուցինք, և նաւակը բերինք ծովեզրը : Տղան երբ նաւակէն դուրս ելաւ՝ ցամաքին վրայ փռուեցաւ . շատ վախցած էր և յոգնած : Տարինք զնա իմ անակներէս մէկուն մէջ, նոյնպէս նաև անոր մօր մօրմինը : Կը կարծէինք թէ մեռած էր կինը :

Բայց քիչ ետքը կինը բացաւ աչուրները : Միայն մէկ երկու խօսք կարող եղաւ լսել : Հարցուց տղուն վրայով : Դրինք տղան անոր քով և անոր բազուկին վրայ : Կինը շոյեց զնա իւր ձեռք երկու, երեք անգամ : Բայց շատ սաստիկ վերաւորուած էր : Յետոյ գոցեց իւր աչուրները և այլ ևս չբացաւ զանոնք, ոչ ալ խօսեցաւ : Ո՛հ, ի՛նչպէս լացաւ փոքր տղան : Բայց նա ազատած էր իւր մօր մարմինը կոկորդիլոսին ձեռքէն :

ՊԱՆԹԵՈՆ

1885ին մեր ընթերցողներուն տուինք Հռոմայ հին եկեղեցեաց մէկուն, Պանթէոնի, ներքին կողմի պատկերը : Ահա հոս կայ ուրիշ պատկեր մը որ կը ցուցնէ նոյն եկեղեցւոյ արտաքին կողմը : Այս եկեղեցին առաջ հեթանոսական տաճար էր, կամ ինչպէս ուսանք կը կարծեն, էր հասարակաց բաղնիք, բայց Գրիստոնէական եկեղեցւոյ փոխուեցաւ աւելի քան հազար տարի առաջ : Բուն շէնքը բոլորած է, և իւր լոյսը կ'ընդունի առաստաղին մէջտեղ բացուածքէ մը : Ճակատի գաւիթը հաւանականապէս աւելցուեցաւ յետոյ . անոր վրայ կը գտնուի Լատիներէն արձանագրութիւն մը, որ մէ կ'իմացուի թէ շինուած է Մ. Ագրիպպասի ձեռամբ, մինչ սա կառավարիչ էր Հռոմայ երրորդ անգամ : Պատմութենէ կը տեղեկանանք թէ Մ. Ագրիպպաս յիշեալ պաշտօնին վրայ կը գտնուէր նախ քան զԳրիստոս Չիին : Թերևս շինեց Պանթէոնը աւելի կանոնաւոր իւր առջի կառավարչութեան ատենը, և գոհ չըլլալով այնչափով, յետոյ աւելցուց անոր գաւիթն ալ : Երկու զանգակատուններն աւելցուց

Պայ մը, որք կը համարուի թէ սգեցցուցած են այն գեղեցիկ շէնքը :

Եկեղեցւոյն ներքին կողմը շատ շքեղ է իւր փառաւոր սիւներով, իւր սպիտակ մարմարինէ գեղեցիկ դուռապեալ շրջանակով, և պորփուրէ և գոյնզգոյն մարմարինէ սալայատակով, բայց կը կարծուի թէ ասկէ շատ աւելի գեղեցիկ էր հին Հռոմէական օրերուն մէջ : Արձանի յատուկ խորշերուն մէջ առաջ կը կանգնէին Յուլիոս Կեսարու և ուրիշ երևելի Հռոմայեցւոց արձանները, և հիմա Վիք-



ՊԱՆԹԵՈՆ

թոր Էմմանուելի, Միացեալ Իտալիոյ առաջին թագաւորին, զամբարանը կը կանգնի այն տեղ ուր էր ատենով կեսարու արձանը :

ՅՈՎԱԵՓԱՅ ԱՂԱՒՆԻՆ

Օր մը երբ փոքրիկ Յովսէփ արտի մը մէջ մորս կը ժողվէր, գտաւ թեւ կոտրած աղանի մը : Տուն տարաւ զայն և անոր թեւը լաւ մը մարմնոյն կապեց քթան թերով մը : Շուտով աղեկցաւ թեւը, և աղանին կրնար նորէն թռչիլ : Բայց չէր բաժնուեր Յովսէփայ քովէն վասն զի շատ ընտանեցած էր անոր հետ : Յովսէփ ուրախ եղաւ ասոր համար վասն զի չունէր ոչ խաղալիկներ և ոչ ուրիշ սիրուն կենդանիներ որոցմով զբօսնուր : Երբ մորս ժողվել կ'երթար, աղանին ալ իւր հետ կ'երթար, թառած անոր ուսին վրայ : Յովսէփ անոր անունը դրաւ Աղուոր, և վարժեցուց զնա գալ երբ կանչէր այդ անունով և կեր ուտել իւր ձեռքէն : Գիշերը աղանին կը թառեր Յովսէփայ անկողնոյն գլխուն վերելը :

Յովսէփայ մայրը անգամ մը շատ հիւանդացաւ, և բաց ի Յովսէփայ չկար ուրիշ մէկը որ ուտելիք տար անոր : Երբ մայրը չէր կրնար ուտել և հիւանդութիւնն սկսաւ աւելի ծան-

րանալ, Յովսէփ գնաց բժիշկ կանչելու : «Կ'առողջանայ եթէ աղէկ կերակուր ուտէ . պէտք է որ ուտէ վառեակ և մսի ջրով նօսր ապուր,» ըսաւ բժիշկը : Յովսէփ ստակ չունէր միս գնելու, և իսկոյն միտքն եկաւ իւր աղանին : Գիտէր թէ անկէ կ'ըլլար լաւ ապուր, բայց սիրտը չէր դիմանար մօրթեւ զայն : Տեսաւ որ դրացիներէն մէկը կ'անցնէր իրենց տան առջևէն, վազեց անոր քով և աղանին ձեռքը տալով ըսաւ . «Հաճեցէք մօրթեւ աղանին, և շինել ապուր մօրս համար, վասն զի նա շատ հիւանդ է :»

Յետոյ տուն վազեց, և շանաց չմտածել իւր խեղճ, փոքրիկ աղանոյն վրայ : Չէր ուզեր որ մայրը լսէր իւր լացին ձայնը, վասն զի նա պիտի ըսէր թէ պէտք չէր մօրթեւ աղանին :

Իբր ժամ մը ետքը դրացին բերաւ պնակով տաքուկ ապուր, և երբ Յովսէփայ մայրը կերաւ անկէ, ըսաւ թէ գրեթէ աղեկցած էր նորէն : «Վաղն առտու ալ ուտելու ես,» ըսաւ դրացի կինը, «ես քեզի ապուր պիտի պատրաստեմ ամէն օր, մինչև որ բոլորովին առողջանաս :»

Յովսէփ կնոջ ետեւէն գնաց դէպ ի դուռը երբ նա դուրս կ'ելլէր, և ըսաւ ցած ձայնով այնպէս որ չկրնար լսել իւր մայրը, թէ ինք ուրիշ աղանի չունէր, և չէր գիտեր թէ ինչպէս միս պիտի ունենային ապուր պատրաստելու համար : Դրացին տակաւին չխօսած, թուշնոյ թեւերու ձայն մը լսուեցաւ, և աղանին թռաւ ներս և թառեցաւ Յովսէփայ ուսին վրայ : «Գու գու» կ'ըսէր կտցելով անոր այտերը :

«Կը տեսնես որ չսպաննեցի աղանիդ,» ըսաւ կինը : Ես ապուրը պատրաստեցի վառեակ մը մօրթեւով, և մենք տունը տակաւին շատ վառեակներ ունինք : Գուն բարի տղայ մըն ես որ յօժարեցար մօրթեւ տալ քու սիրուն աղանիդ մօրդ ապուր պատրաստուելու համար :»

Ո՛րչափ երջանիկ եղաւ Յովսէփ : Հիմա ևս աւելի կը սիրէր իւր աղանին զոր դարձեալ ձեռք բերաւ : Մայրը մինչև որ աղէկ մը չառողջացաւ, չէր գիտեր թէ քիչ մնացած էր որ ուտէր խեղճ փոքրիկ Աղուորը :

ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

«Կ'ուզեմ հարուստ ըլլալ . եթէ հարուստ ըլլայի, ես գիտեմ թէ ինչ պիտի ընէի,» ըսաւ փոքրիկ տղայ մը որ մը, և իւր գրուիւր այնպէս մը շար-

ժեզ որ իբր թէ իւր խօսածէն շատ մը աւելի կը խորհէր: «Գեղճ տղեկ,» ըսի, «դուն տակաւին չես գիտեր աւնէն բան, դուն աակէ շատ մը աւելի իմաստուն պիտի ըլլաս երբ աւելի մեծնաս: Քեզի պատմութիւն մը ընեմ Պրունավիքի Գ. քոյին և անոր աղամանդներուն վրայով: Նա ունէր չորս հարիւր հազար Անգղիական ոսկիէ աւելի արժող աղամանդ, և անոնց պատճառաւ միշտ բանտարկուածի պէս էր: Բնաւ չէր համարձակեր գիշեր մը անգամ դուրս ելլել անէն, վախնալով թէ մէկը պիտի գողնար զանոնք: Կը բնակէր այնպիսի տան մը մէջ, ուր հանգիստ չէր: Տունը շատ կը նմանէր բանտի. յոյժ թանձր և զօրաւոր պատեր ունէր, դուռերը և պատուհաններն էին երկաթէ և շատ հաստատուն, և նիգերով ամրացած: Տան դուրսի կողմը շուրջանակի քաշուած էր շատ թանձր և բարձր պարիսպ մը, և պարսպին վերի կողմը կար երկաթ վանդակորմ (բաճէ) մը ցցուած ունենալով սուր ծայրեր որ կը կտրէին դանակի պէս, և այնպէս ճարտարութեամբ շինուած էր որ եթէ մարդ դաշէր անոնց մէկուն, իսկոյն զանգակի մը ձայն կը հնչէր: Այս վանդակորմը շինուեցաւ այնչափ շատ ստակով որ մեզի մեծ հարստութիւն կ'երևի:

Պրունավիքի Գուքը իւր աղամանդները կը պահէր ապահով արկղի մը մէջ որ շինուած էր իւր անկողնոյ սենեակին թանձր մէկ պատին մէջ, ուր կրնար նայիլ անոնց վրայ երբ և ուզէր: Եւ իւր անկողինը այս պատին կոթնոցացած էր, այնպէս որ գոյ չէր կրնար մօտենալ աղամանդներուն առանց արթնցունելու կամ սպաննելու Գուքը: Արկղը շատ զօրաւոր էր վանն զի շինուած էր քարէ և երկաթէ: Եթէ ոք փորձէր բանալ զայն, այնպէս կարգադրուած էր որ խել մը հրացաններ կը պարպուէին և իսկոյն կը սպաննէին զնա, և նոյն ժամանակը զանգակներ կը հնչէին տանը իւրաքանչիւր սենեակներուն մէջ:

Անկողնոյ սենեակը ունէր միայն մէկ պատուհան, այն ալ այնչափ բարձր որ Գուքը չէր կրնար տեսնել դուրսը, և ոչ ոք կրնար անկէ ներս մտնել: Գուքը շինուած էր յոյժ հաստ երկաթէ, և ոչ ոք կրնար ներս մտնել առանց սորված ըլլալու անոր նորօրինակ կղպաքը բանալու յատուկ կերպը: Բոլոր ասոնցմէ զատ, իւր սենեակին վրայ միշտ պատրաստ ունէր

լեցուած ստրճանակներ պատեանի մէջ:

Այս ինչ սենեակ: Ինչպէս հանգիստ կրնար ըլլալ այն մարդը՝ թէ պէտ այնչափ հարուստ էր: Ողորմելի՛ մարդ: Ողորմելի՛ հարուստ: Չունէր կէսն անգամ այն վայելուքներուն որ դուք, տղաք, ունիք իհպէտ չունէնաք աղամանդներ անոնց համար հոգալու, և կրնաք ներս և դուրս վազել և խաղալ ինչպէս որ ուզէք:

Կը տեսնէք որ ստակը չէ մարդս երջանիկ ընողը: Իրաւ որ չէ: Սուրբ Գիրքը կ'ըսէ. «Աւելի աղէկ է քիչ բանը ճէրմը վախով, քան թէ մեծ դանձր՝ խռովութիւնով.» և թէ՛ «Աստուած պաշտութիւնը դո՛հունակութիւննով մէկտեղ մեծ շահավաճառութիւն մըն է:» Նաև կ'ըսէ, «Չեղի դանձր գիզեցէք երկինքը, ուր որ ոչ ցեցը և ոչ ժանկը կ'ապականեն, ու ոչ գողերը պատ կը ծակեն և կը գողնան:»

ԿԱՊԻԿՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Թուրքի մէջ Պուրխա Նափոյէն կոչուած թաղը կին մը իւր ստակները տունը գտնուած իւր գըրոցին մէջ դնելով՝ բանալով գոցեց զայն, և գնաց շուկայ այլ և այլ պիտոյք գնելու: Երբ նորէն տուն դարձաւ, տեսաւ որ կորսուած էին գըրոցին մէջէն երեք հատ Նափոյէն ոսկի, հինգ ֆրանքնոց ոսկի ստակ մը և մէկ արծաթ ֆրանք: Բայց բնաւ նշան մը չկար թէ մարդ մը գողցած էր զանոնք: Բարեմիտ կինը շատ շփոթելով այս կորուստներուն վրայ, խորին մտածութեան մէջ ընկղմած էր, և ահա ծիծաղելու բարձր ձայներ լսեց իւր դարացոյն պարտեղէն: «Սէ՛հ գողը, ահա՛ գողը,» իսկոյն աղաղակեցին խել մը մարդիկ, «Ուրկէ՞ գողցեր է զայս:»

Տիկինը վար իջաւ իսկոյն, դուրս վազեց տնէն և ըսաւ. «Ստակներս, պարսններ, ո՛ւր է գողը?» «Հոս, ծառին վրայ է, Տիկին,» ըսին, ցուցնելով կապիկը որ կը գտնուէր անոնց գլխուն վերևը բարձր ճիւղին վրայ, «բայց ստակը հոս է:» Կապիկը որ անշուշտ կրնար ըլլալ գողի մը լաւ օգնականը, տեսնուած էր որ վեր ելլելով բարեմիտ տիկնոջ սենեակներէն մէկուն պատուհանէն ներս մտած և բացած էր գըրոցին կղպաքը, և ստակը գտնելով պահած էր իւր բերնին մէջ և բերած էր իւր տիրոջ:

Արժանահաւատ կենդանաբան մը կ'ըսէ թէ Լոնկոյի մէջ քիմիանոցի մը (տեսակ մը կապիկ) անկողին կը յար-

դարէր, տուն կ'աւելէր, և այնչափ կ'օգնէր խոհարարին որ մինչև անգամ շամկուր (սփոքր շն) կը դարձունէր: Մ. տը կրնաստիքը, Գաղիական նաւատորմին մէջ սպայ մը, կը պատմէ Գաղիական մարտանաւու մը մէջ զբաւուող ուրիշ քիմիանոցի մը վրայ որ կ'օգնէր խոհարարին, կը դարձունէր նաւուն անուորդը (սփոքր), առագաստ կ'ամփոփէր ճիւղ նաւատորմի մը պէս: Չինաստանի մէջ կապիկները կ'օգնեն տունկին վրայէն թէյի տերեւ ժողվելու, և Լորտ Մոնպատայ սովոր էր ըսել, ոչ իբրև կատակ, թէ անոնք գիւրաւ կրնային խօսիլ, բայց շատ խորամանկ ըլլալով կը զսպեն իրենց լեզուն, որպէս զի մի՛ գուցէ ծանր գործեր յանձնուին իրենց:

ԿՐԻԱ

Կրիան շատ կ'ապրի: Մօտերս Անգլիոյ Չէսթըր քաղաքին մէջ մեռաւ կրիա մը որ 125 տարեկան կար, վանն զի տան մը մէջ պահուած էր մէկ դարէն աւելի: Այս կրիան ընտանեցած էր տան կատուններուն հետ և անոնց հետ մէկ պնակէ կ'ուտէր իւր հացը և կաթը: Ուրիշ կրիաներուն պէս այն ալ գետինը կը փորէր ձմեռը և հոն կը թաղուէր. և զարմանալի էր որ կատունները բնաւ զարմանք չէին ցուցնէր անոր աներևութանալուն վրայ: Հոկտեմբերի կիսուն ատենները կ'երթար պարտեղը, և այլ ևս չէր տեսուէր մինչև Ապրիլի օրերը: Այնուհետև յանկարծ կ'երևէր խոհանոցի դրան քով, տիղմով բոլորովին չաղախուած, և նորէն կ'առնուր իւր կերակուրը բարեկամներուն (կատուններուն) հետ իբր թէ ասոնց հետ դեռ որ մը առաջ ճաշած էր: Ոչ ոք կարող էր իմանալ թէ այս կրիան ո՛ւր կը թաղէր ինքզինք մինչև դուրս ելլելն իւր առ ժամանակեայ գերեզմանէն: Գեանին մէջի ծակը ուր կը գտնուէր ձմեռը, քննուելով կը հասկցուէր որ երկու ոտք, և երբ ձմեռը սաստիկ ըլլար՝ մինչև չորս ոտք խորունկը իջած էր: Ծակին սրամագիծը կ'ըլլար մէկ ոտք կամ աւելի, և մեծ դաղանիք է թէ ինչպէս իմաստով աչքէ կը ծածկէր զայն մինչ կը փորէր:

Ամերիկայի Միտիոնարայ ընկերութեան կողմէն,
Արտոնաւոր ձ. Բ. ԿՐԻՆ
Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ԱՐՐԵՐԸՄ
Ֆինանսներու Եւրոպայի Ամերիկայի Խան.
ԿՈՍՏԱՆԳՆՈՒԿՈՒՄ
Ի ՏՊԱՐԱՆ